ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/145/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» հուլիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից «Hetq.am» լրատվականի՝ «Արտաշատի ավագանու անդամի ընկերությունը՝ նույն համայնքի սուբվենցիոն ծրագրերի հաղթող» վերտառությամբ[1] հրապարակմամբ ներկայացված տեղեկատվությամբ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի վերաբերյալ վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման հիմք հանդիսացած նյութերը, պարզել է. Կառլեն Մկրտչյանի հետ քաղաքական հարաբերություններով կապված անձ (Արտաշատ համայնքի ավագանու անդամ)՝ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Նարեկ Բաղդասարյանի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 7-ին թիվ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 գնման պայմանագրի կնքմամբ Կառլեն Մկրտչյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության» մասին օրենքով սահմանված կարգով

[1] https://hetq.am/hy/article/166474

10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության» մասին օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ